

## ՈՐՈՅՆ Է ԿՇԱՌԻՄ... ՄԻԶԱԿԵՏԸ

Կարո՞ղ է արդյոք մի մետրը երկար լինել մրգացից: Հավիվ թե: Բայց փորձեք համեմատել առաջին հայացքից խիստ միանման երկու քանոններ և դուք անպայման կզանքը փոքր, թեկուզ մի քանի միկրոն տարբերություն: Իսկ ամենասույց մետրը ՍՍՌ-ում պահպամ է Լենինգրադում, նախկին Չափի և քաշի գլխավոր պալատի շենքում: Այն պատրաստված է պլատինի և իրիդիումի համաձայնաձերից:

Սակայն լենինգրադյան մետրը միայն պատճենն է: Իսկ «գլխավոր» մետրը գտնվում է Ֆրանսիայում, Փարիզի մոտ: Հենց նա էլ համարվում է երկարության միջազգային էտալոնը:

Աշխարհի նշանավոր գիտնական-չափագետների մի խումբ մշակել է երկարության մի նոր էտալոն, որը հիմնված է լուսի ճառագայթի չափման վրա: Այդ աշխատանքներին մասնակցել են նաև սովորական գիտնականները: Ստացված էտալոնը չի վայենում ո՞չ ժանգից, ո՞չ խոնավությունից, ո՞չ էլ ձևափոխումից և դարեր շարունակ կարող է մնալ անփոփոխ:

Մասսայի միավորի պետական էտալոնը, այսպես կոչված «№ 12 կիլոգրամ» նույնական պատրաստված է պլատինի և իրիդիումի համաձայնավածքից և ունի լուրացրած կողերով գլանի ձև:

Վոդ լուսային մեկ ալիքը կիրխարիներ հարյուր հազարավոր նույնախոսային կաբելների:

Լազերի լուսային հառագայրը, հավանաբար, կարելի է օգտագործել լուսնի կամ մոլորակների վրա գտնվող արշավախմբերի, ինչպես նաև երկրից տիեզերանավերի կամ նենց տիե-

թերին է հաջողվել տեսնել այն հապագյուտ կշեռքը, որով ստուգում են մասսայի միավորների էտալոնները: Դրանք գտնվում են Լենինգրադի այդ նույն չափագիտության ինստիտուտում և թիզ են նաև այն կշեռքներին, որոնց մենք մարգին ենք մեր առօրյայում: Այդ կրշեռքները դրված են հատուկ սենյակում, ուր մարդիկ հազվադեպ են ներս մտնում: Կշեռքի նետ կապված բոլոր գործողությունները կատարվում են պատի ետևում տեղագործված պուլտից եկող հատուկ գգիչների միջոցով: Կշեռքները տեղակալված են քարե վիթխարի բուրգի վրա, որի հիմքը գտնվում է երկրի մակերևույթից 5 մետր խորության վրա: Դա անհրաժեշտ է շենքի ցնցումներից խուսափելու համար: Սլաքի դերը կատարում է... լուսի նուրբ ճառագայթը:

Կան նաև համեմատաբար պակաս ստույգ կշեռքներ: Նրանց վրա օրինակ, կարելի է չափել, թե ինչքան է կշռում ձեր... ստորագրությունը: Այո՛, այո՛, առանց կատակի: Կշռելով թղթի մաքուր թերթը, դուք ստորագրում եք նրա վրա և կշեռքի մարքն ցույց է տալիս այլ բաժանմունք: Թանաքի չորանալու հետ մեկտեղ ձեր ստորագրության կշիռը փոքրանում է: Ցանկության դեպքում կաբելի է իմանալ նույնիսկ թղթի վրա մատիտով դրված միջակետի քաշը:

Գերանավերի միջև կապը պահպանելու համար: Անհրաժեշտ է, սակայն, լուծել նառագայրը նպատակին ուղղելու և լազերի ելքի բավարար կարողություն ստանալու խնդիրը, որովհետև դեռևս գոյուրյուն չունեն լազերներ, որոնք տային բավարար էներգիայի անընդհատ փունչ:

